18. ՋԱՆՋԻԼ ԿՌԱՆ

Կէլնի մեյ թակավոր: Կուներնա մեյ կնիկ, մեյ աղչիկ, մեյ լաճ: Օրմ թակավոր ուր տղին կասի. - Բալա՛մ, ես կմեռնեմ, որ ւոյու կնստես իմ թախթ, Արևմուտքի և Արևելքի թակավորներ քեզնից կոիվ կուզեն, չէլնի ասես, թե պատրաստ եմ. ասա՝ քյանիմ օր զի ժամանակ տվեքյ, իմ պատրաստութեն տիսնամ, նոր կովենքյ:

Մնաց մեյ ժամանայ վերճ. թակավորն էլ մեռավ, կնիյն էլ մեռավ:

Տղեն նստավ ուր խոր տեղ՝ թակավոր: Էն օրեր Արևմտյան թակավոր էօրոխկեց ինորից կոիվ ուզեց: Տղեն խոր խրատ մտքից խաներ էր, էլ օր չուզեց, ասաց՝ պատրաստ եմ:

Էլավ կնաց կոիվ, կոիվի մեջ հաղթվավ: Ուր թակավորութնի կեսը կնաց ծեռնեն:

Քյանիմ ամիս սորա, Արևելյան թակավորն էլ էլավ տղից կոիվ ուզեց: Իսորն էլ պատրաստ եմ՝ ասաց: Էն կովի մեչն էլ հաղթվավ, ուր մնացած խողերն էլ ծեռնից առին, տղին ուր քյուրեոչ քյառսուն ոչխար տվին, խանին էօրոխկեցին այուրգյուն, մեկ անբնակ կղզու մեչ: Քյեոր վ՛ախպեր էն կղզու մեչ մէ քյէօշկմ շինեցին էնտեն ապրան: Էն քյառսուն ոչխարն էլ ախպեր կտաներ հմեն օր կարածար կպիրեր, քյեոր կաթ կկթեր, ինրով կապրին:

Օրմ տղեն ոչխար տարավ մեյ չիման տեղ արածալու, էն տեղն ախպյուր կեր: Էն սխպրից մեյ դմվրեշ տյուս էլավ, խետ իրեքյ շան: Ասաց տղին. - Պմրեով քյե, տղա: Պե էտա ոչխրներ խետ էսա շներաց փոխենքյ:

Տղեն ասաց. - Չի տուն ախպեր կա, էրթմմ խառցուցեմ, առատուն քյե պատասխան կուտամ: Տղեն իրիկուն էկավ տուն, քյեոր ոչխար կթեց, ասաց. - Ախպեր, էսօր ոչխարն ինչ կանղա՞ր կաթ իտուր:

Ասաց. - Դե՛, ոչխրի տերու խերն անիծեմ, ես ոչխրներ հմեն շան խետ պիտի փոխեմ:

Մե շատ կա ապրենքյ մնաց շներն էլ կիրցուցենքյ: Էլմ կանես քյո խոսք, ինչխ չպախցիր մեր խոր խոսք, էլանքյ էսա հալին, մկա էլ էտա՞ կանես:

Տղեն առատուն խոռվելեն առեց ոչխար կնաց: Կնաց էլմ էն ախպրի վերեն կանաչ տեղ: Դմվրեշն էլմ տյոա էկավ, իրեքյ շուն խետ: Ասաց. - Պմրեով քյե, տղա՛, ասի՞ր ախպորդ:

Տղեն ասաց. - Ասի՛, պե փոխենքյ:

Էն տեղ փոխեցին ոչխրներ: Ոչխար դմվրեշն առեց, կնաց:

Տղեն էլ շներն առեց, կպիրեր. բռուսց. - Դնվրեշ բաբա, շներաց անունն ի՞նչ ի:
Ասաց. - Ալ-կտրմ, Դավդա-զարան, Զանջիլ-կոան:
Տնոցավ. շներաց ասաց. - Զում էսօր ծեր տերն ես ի, ըսդյուց ետ՝ էսա ի:
Տղեն շներն առեց իպե տուն, խաց կերան, շներաց խաց իտուր:
Խաց ուտելու ժամանակ շներն ասին. - Աղա՛, առատուն շոտ էլի էրթանքյ ավի:
Առատուն էլան կնանցին դաշտ, շներն ասիցին. - Աղա՛, տյու նստի էսա ծառի մոտ, մենքյ էրթանքյ ավ անենքյ, գանքյ:
Ծներ կնանցին քյանիմ խատ լապզտրակ. աղվես. գյել ժողվոտեցի՛ն, առին էկան:
Տղեն որ տեսավ էտա ջանավարներ, էլավ ծառի վերեն, նստավ:
Ալ-կտրմ ասաց. - Զանջիլ-կոան, կնա աղին ասա, թող էճնի տակ, չվախենա, մենքյ խետն ենքյ:
Զանջիլ-կոան կնանց, ասաց տղին. տղեն էճավ տակ, էնտեղեն մեյ տրան էկան տուն: Քեռր, ախպեր խաց կերան, շներաց էլ խաց տվին:
Ծներ ասին. - Աղա՛, էլի կնա քյնի, առատուն կայեղմ պոնի, որ ընցա փոսթեր տանենքյ ծախենքյ:
Առատուն տղեն էլնվ վեր, տեսավ որ շներ վտսթերն խաներ են, կայեղմ պոնեց լցեց ինե: Առին տարան ծախիցին: Զորս խարիր փոսթ էր, մե մեյ ոսկիյ՝ չորս խարիր ոսկի:
Փարեն իտուր յաթաղ առեց, քյուրոջ, ուր խամար խալավ առեց, էկավ տուն: Քյեոր ուրախցավ:
Էն մեկէլ օր էլմ կնանցին ավի, խինգ-վեց խարիր խատ գյել, աղվես, լապզտրակ, կուզ ժողվոտեցին պիրիցին:
Իրիկուն խաց կերան, շներաց խաց տվին: Ծներ ասին. - Աղա՛, էլի կնա քյնի, առատուն էլի վեր, փոսթեր տանինք ծախել:
Առատուն կայեղ պոնեց, առեց փոսթեր, տարավ ծախեց:
Մոտն էլավ չորս-խինգյ խարիր ոսկի:
Էկան տուն, քյուրոջն ասաց. - Քեռ՛ր, էլ մենքյ էսա անվերվերի կղզու մեջ չենք ապրի, էլի՛ էրթանքյ մեյ շենլինք տեղմ:
Քյեոր ասաց. - Զանմ. տյու ընչի՞ էսնա կանեն, ինչ՛ կփոփխվես: Քյանի պետ էր, կոիվ արեր, մեր խողեր մեր ծեռնից խանիր, ոչխարներ խանիր մեր ծեռնից, մընկա էլ գյեռ աղեկ ի, ճյուրն ինգյի առուն, ի՞նչ էլմ սատանեն մտե քյե, կուզես ընտեղեն էլ էրթնլ:
Ախպերն ասաց. - Ես էսա կղզու մեջ չեմ ապրե, փանրեն բեռլ, ընչի՞ չենքյ էրթա շենլինքյի մեջ ապրե:
Քյեորն ասաց. - Տյու կիտես:
Էնտեղից էլանն, կայեղ պոնեցին, մտան ինե, էլանն քյաղաքյ: Քյաղքյի եզր տունմ տեսան, որ տաս-տսնխինգյ օդա էր, ամաս տանոտնակ էր, մարթ չկեր մեջ:
Քյեոր ախպեր ասին. - Էսա մե խամար շատ աղեկ ի:
Մտան էն տուն, էնտեղն ապրան:
Առատուն ախպեր շներն առեց կնանց էլմ ավի: Էն գյնխ քյեորն էլ ինգյնվ տուն, ֆռաց: Ասաց՝ ախր էսա տեղ շինութեն էլե, մարթ ի ապրե ընտեղ:
Կնանց տակ տուն, տեսավ, որ ճեռչ ճնուցիմ քյար կա էնտեղ, տկեն էլ ծեյմ կուգյեր:

Քեռորն ասաց. - Վո՞վ ես. ծեն խան, տյու զի, ես՝ քե:
Քյարի տկից դևն ծեն իտուր, ասաց. - Տյու ի՞նչ ես:
Ասաց. - Ես իսանՕոլի եմ:
Ասաց. - Թե զի նշանց տամ, վմխենամ զի սպանեքյ, իսան օոլլուն բմխտ չկա:
Աղչիյն ասաց. - ՉԷ. ես որ խոսքյ տվի, ես իմ խոսքյին տերն եմ:
Դևն էլմվ տյուս: Աղչիյն դևն մեյմկու սիրիցին:
Դև խարցուց. - Քյե՛ ի՞նչ կա. ի՞նչ չկա:
Ասաց. - Զի սխպերմ կա:
Ասաց. - Վմխենամ քյո ախպեր իմնա. զի սպանի:
Ասաց. - Ապա ի՞նչխ անենքյ, տյու կանա՞ս իմ ախպոր սպանի, որ ես տյու խանգյիստ մնանք:
Դևն ասաց. - Զի յոթն ախպեր կա ֆլան գյեղ, էն տեղ իգյի կպախեն: Տյու վեր քյե խիվընդութեն տիր, ասա՝ զիկ էն տեղից խավող պե, որ ուտեմ ժրեմ: Էն կէլնի կէրթմ էնտեղեն խավող կպիրե, իմ ախպերներն ինոր կսպանեն:
Իրիկուն էր, ախպեր էկավ տուն, շատ տյուր թփեց, տյուր պմցող չէլմվ:
Քյեոր յավաշ-յավաշ էկավ տյուրն իպաց:
Ասաց. - Քյեոր, քյե կուրբան, քյե մատաղ, քյե ի՞նչ էլեր ի:
Ասաց. - Վալլա ախպերիկ, ես խիվանդ եմ:
Ախպեր քյուրեոչ գյրկեց, առեց տարավ օդեն:
Քյուրոշն ասաց. - Քյեոր ջան, ի՞նչ կուզի. ասա, ես քյե պիրեմ, աստծու սիրուն, տյու մի խիվնդնա, թող ի՞նչ կէլնի թող էլնի:
Քեռորն ասաց. - Ախպե՛ր. ֆլան իգյուց թե խավող պիրես, ես ուտեմ, ես կլավանամ:
Ասաց. - Թո քյո ուզած խավող էլնի:
Քյնավ, առատուն էլավ վեր: Կաց պմրով արաց, կնմց:
Շատ կնմց, քյիչ կնմց, կնմց մտավ իգյին, արևախաս խավողներ ճեոկեց լցեց կողով. որ վերցեր, էնդեխից յոթ դև էլան. - Հեյ վախ, - ասաց, - իմ էրթալու օրն ի:
Ասաց. - Ալ-կտրմ, Դմվդմ-զմրուսն, Զմնջիլ-կոան, ազատեքյ զիկ:
Ծներն ինգյան դևերաց իտև, յոթին էլ ճարդեցին:
Առեց խավող. էկավ վեր ախպրին, շներաց լվաց: Էկավ տուն: Տյուր տփեց, քյեորն տքտքալեն դռան իպմց. խավողն իտուր, քյեոր կերավ:
Առատուն տղեն առեց ուր շներ. կնմց ավի, աղջիկ կնմց դևու մոտ, ավսաց. - Դև՛, խավող իպե:
Դևն ասաց. - Հե՛յ վախ, որ ընկուն ի, իմ յոթ ախպերներն էլ կնաց:
Ասաց. - Իսոր ճա՞ր որն ի:
Ասաց. - Էլմ կխիվնդնմս. կասես քյի, իմ ջան կլոր կուզի: Կէօրոխկես ֆիլան բոստան, էնտեղ զի քյառուն քյեոի կա, բմլքյի.քյեոիքյ սպանեն: Կանաս շներ մի թոնի տանի խետ:
Իրիկուն տղեն էկավ տուն, էնքան տյուր տփեց, որ էլմ քյեոր նազով էկավ տյուր իպաց:
Մտավ քյուրոչ թև, թե. - Աստծու սիրուն. քյե ի՞նչ լազմ ի, քյո ջան ի՞նչ կուզի, ասա, պիրեմ, թմյլմ տյու մի խիվնդնա:
Ասաց. - Ախպե՛ր, թե ֆլան տեղեն զի կլոր պիրես, ես ուտեմ՝ կլավանամ:
Ասաց. - Թո քյո ուզած կլոր էլնի:

Առատուն էլավ քյուրեոշ կաց պսրև արեց:

Քյեորն ասաց. - Աստծու սիրուն, ախպե՛ր, շներ թո մնան զի սաբրի ինգյեր, ես կմեռնեմ տուն մենակ:

Քյուրեոչ խոսքյ չկոտրեց, շներն իթող կնանց: Կնանց բոսդան մտավ, թալիսմ իլին լավ կլորներ ճեռկեց, առեց որ գյեր, տեսավ, որ ի՞նչ, էնդեհեն քյառսուն խա դև էկան:

Տղեն ասաց. - Հե՛յ վախ, իմ էրթալու օրն ի: Ա՛խ Ալ-կտրմ, Զանշիլ-կուան, Դավդա-զարան ըստեղն էլնիքյ, իսոնց ճեռչ կտոր ականշ թողնիքյ:

Ասելուն պես՝ տեսավ շներ էնտեղ: Քյառսուն դևերն շներն կոտորեցին, արնի մեչ շաղաղվան:

Առեց կլոր, էկավ ախպրի վերեն, շներ լվաց: Էն տեղեն առեց կնաց տուն:

Կլորն իտուր քյուրոչ, խաց կերան պառկան:

Առատուն տղեն առեց ուր շներ, էլմ կնանց ավի:

Աղչիյն կնաց մոտ դև, ասաց. - Կլոր պիրեց, շներն էլ խետ:

Դևն ասաց. - Է՛յ վախ, իմ քյառսուն քյեռիքյն էլ սպանեց, որ իմցավ՝ զիկ էլ կսպանի:

Ասաց. - Ի՞նչ ճար կանանք կնդնե ըստրան:

Ասաց. - Էլմ խիվանդցի, էօրեռխկի Հնդի Ցամանա ճյուր ուզի:

Իրիկուն ախպերն էկավ, տյուտ տփեց, մտավ ներս:

Քյեորն ասաց. - Էլմ խիվանդ եմ, զի Հինդի Ցամանա ճյուր պիրի, որ պիրես՝ ես կժրեմ:

- Թող քյո ուզած ճյուր էլնի, կպիրեմ:

Առատուն էլավ կաց պանրեով արաց, որ պիտի էրթեր, քյեորն ասաց. - Ամա՛ն, աստծու սիրուն, շներ թո մնան իմ կուշտ, շներ մի տանի:

Ինգյանվ ճանմբանխ կնանց, շատ կնանց, քիչ կնանց, աստված կիտեր: Թակավորական քյաղաքյ կնանց խասավ, կնանց պառվում տուն մասֆր էլանվ:

- Պանրեով քյե, պառավ, զի մեկ կիշերվան տեղ տուր:

- Վալլա՛ շահել, տեղ չունեմ:

Ասաց. - Ա՛ռ քյե էսքան ոսկի, զի տեղ տուր:

Խե ոսկու ծեն լանվ, պառավն էր՝ չախրակ, պուտուկ, ճյոր, հմեն իթալ տյուս, տղին տեղ արաց:

Տղեն նստավ: Զրյուցին:

Դեռ՞ր կէրթանս, դեռ չես էրթա՞:

Տղեն ասաց. - Վալլա՛, քյեորս խիվանդ ի, կէրթամ Հինդի Ցամանա ճյուր պիրեմ, խմի՝ ժրի:

Պառավ խասկցավ, որ իտոր քյեոր կուզի ուր ախպոր թալաֆ անի, ամա՞ն ծեն չիխան:

Առատուն պառավ ճանմբանխ նշանց իտուր, ասաց. - Կէրթանս ֆիլան սարի տակ, կկսյնես, մեյ սիվդակ խոչ, մեյ սև խոչ կուգյանն, գյլեխ գյլեխի կգանեն, սար կպանցվի: Տյու շոտ մտի ներս, ճյուր լից, ծեռդ քյանի խնձեոր էլ կուգյա, առ էլի տյուս, քյանի սար չկոծվի վերեդ:

Կնանց սարի մոտ, սև սիվդակ խոչերն էկան, գյլեոխ գյլեխի զանրկին, սար պացվավ, տղեն մտավ շոտմ շուշեն իլից, ծեռ իզարկ էրկու խնձեոր առեց, էլավ տյուս: Սարն էկավ իրար, առեց էտա ճյուր, խնձեոր էկավ պառվու տուն:

Պառավն ասաց. - Էսօր մ'էրթա, էսա քյաղաքյ ճյուր չկա, տարին մեյ դիր. մեյ խատ աղչիյ կտանենք վիշապ ուտի, որ ճյուր թողնի գյա: Էսօր թակավրու աղչկան ներբաթն ի, կաց թամաշա արա:

Տղեն էր տեսավ, որ լալով, գյոսալով, տեսավ որ թակավրու աղչիյ պերին, որ տան վիշապին: Աղչիյ թուղին էնտեղ, մարթեր շարվան էնտեղ, որ ճյուր տանեն:

Տղեն ասաց. - Ալ-կդրմ, Դավդա-զնրան, Զանջիյ-կոան ըստեղն էլնի՞քյ:

Ասելուն պես, շներն էկան: Տղեն աղչկա ծեռ պոնեց, տարավ ախպրի մոտ, տարավ իպե, որ վիշապն ուր խանի տյուս:

Վիշապ որ տյոա իխան-չիխան, շներ ինգյանն վերեն կդրոցին:

Աղչիյն էր ծեռ իգար արնի մեչ, իզնրկ լաճու քյամկի վերեն:

Տղեն առեց ուր շներն էկավ պառվու տուն:

Ժողովուրդ սկսեց ճյուր կրել: Աղչիյն էլ իթող, կնաց տուն:

Աղչիյն, որ կնանց տուն, խերն ասաց. - Աղչի՛կ, ընչի՞ էկար տուն, ժողովուրդ ծարավ պիտի կոտորե՞ս:

Աղչիյն ասաց. - Զէ՛, աղա, ըսկնն մեյ տղեմ զի ազատեց:

Թակավոր դալալ իտուր կանչել, ասաց. - Վո՞վ որ իմ աղչիյն ազատեր ի, թո գյա ուզի՝ ուզած տամ:

Մեկ փսալարեղ, պնտ կտրիճմ կնանց թակավրուն ասաց. - Թակավոր ապրած, ես եմ սպանե վիշապ:

Աղչիյն ոսկի խնձեոր պոնե ծեռ, որ ուր ազատողի խե զյեր՝ զնաներ ոսկի խնձոր, խորն շանց տեր:

Պառավ տատանց էկավ, ասաց. - Տնավե՛ր, ի՞նչ ես նստե: Էլի տես, թակավրու աղչիկ ազատողն իկե, մեյ կտրիճմ ի, որ աչք պիտի թամաշա անի:

Տղեն կէլնի ուր շներ կտանի, կասի. - Էրթանմ ես էլ թանմանշն:

Կէրթն տիսնա, որ էն մարթ ըսկում ի կուտուշմիշ էլե թակավրու կուշտ, որ չսանձ թակավորն էլ պանցր ի:

Տղեն որ կտիսնա էտա մարթ, կասի. - Որ տյու շատ կտրիճն ես, էյի մեյ խատ էսա շան խետ գյուլնշ թալ, խենքյ տյու ընչի՞ ըդանա ուտեր ես:

Կասի. - Կուրսի՛, շան որդի, որ էլա վեր, քյե էլ կճղեմ, քյո շուն էլ:

- Զէ՛, որ տյու կտրիճ ես, էլի մենակ իմ շան խետ գյուլնշ թանլ:

Մարթ որ ճերտլանմիշ կէլնի, ծեռ կթանլի տեխ շուն, տերն կասի. - Զանջիլ-կոան, քյե տեսնամ:

Զանջիլ-կոան պոնելուն պես, կճղի մարթուն:

Էն տեղից կալսբալը կէլնի, տղեն կինի փեանշանի տակ, աղչիյն ոսկի խնձեոր կզանի տղին, կասի. - Էսա ի իմ ազանտող, չեքյ ավատա՝ վեր քյամկին իմ ձեռաց նշան կա:

Կպերին, կտեսնան, որ ինոր վերեն նշան կա, թակավոր կասի. - Ուզի՛, քյո ուզած տամ:

Կասի. - Ազատածս կուզեմ:

- Թող էլնի, - կասի թակավոր, - ի՞նչ ունես, ի՞նչ չունես:

Կասի. - Ես ունեմ մե քյեոր, էրթանմ իմ քյեոր պիրեմ, նոր՝ փսալվեմ:

Նշան կղնի, կէլնի կէրթն, որ քյեոր պիրի: Տղեն կէլնի կուզյանն պառվու տուն, կասի. - Վալլա՛, ես նշանվա թակավրու աղչկա խետ, կէրթամ քյեորս պիրեմ, որ խարսնիս անեմ:

Կասե. - Ի՞նչխ էլավ. որ տյու թակավրու աղչկան խետ նշանվար:

Տղեն կպատմի ուր արածներ:

Առատուն կէլնի. կաց պարև կանի. որ էրթա, պառավն էն ճյուր ինն խնձեորներ կփոխի. կասի. - Ինոր ումոտ խորեմ. էն ընչի՞ խմի. ես կխմեմ ջահելնամ:

Տղեն կաց պնարև կանի. կինի ճնմբախ:

Պառավ գնախտիկ կկանչի շներ. կասի. - Դև ինան ծեր տիրոջ քյոր. ղոան վերեն ծակեր ին. պալթեն կախեր ին. խետ ծեր տեր մտնի ներս՝ կթոնեն վերեն, որ ըսպանվի: Տյուքյ ինոր ճղուկ գյլեոխ կանեք իրար, մեյտ էլ իկեքյ մո զիկ տեղ տամ. տարեքյ դրեք վերեն. որ ժրի:

Կինին ճնմբնախ կէրթնն: Կէրթնն տան կմոտանան, դև ինան աղչիկ, որ կտիսնան. կպատրաստվեն. տղեն տյուտ կտփի, քյեոր տյոտ կպնանն, որ մտնի ներս ախպեր:

Քյեոր կասի. - Ախպե՛ր, էնա տեղեն ընցի:

Տղեն որ էն տեխեն կընցնի. դև պալթեն կթոնի, որ կթոնի, գյլեոխ կճղվի:

Ջանջիլ-կոան կխասնի գյլեոխ կուտա իրար, կասի. - Ալ-կդրմ. շոտ վնազի Նինեմ պառվուց տեղ պե:

Ալ-կդրմ կխասնի տեղ կպիրի. կլցի. լցելուն պես՝ տղեն կժրի:

Տղեն պնմ չասե քյուրոչ, կէլնեն կէրթնն. կնստեն:

Էնտեղ կտիսնա. որ քյուրոչ կուշտ քյանիմ խատ շան լակոտ կա: Ծան լակոտներ դևիցն էր ունեցե աղչիյ:

Տղեն կասի. - Էսա ի՞նչ ի:

Կասի. - Սենակ ի մնացի. էլնն փողնից ժողվիցի:

Տղեն կէլնի էտա շան լակոտներ կսպանի: Էնտեղ քյուրոչ կպատմի, թե ես նշանվեր եմ թակավրու աղչկան խետ. իկեր եմ քյե տանելու, որ խարսնիս անեմ:

- Լա՛վ, - կասի աղչիյ, - վնդ չէ, մեկէլ օր պատրաստութեն տիսնանք. էրթնքյ:

Առատուն կէլնի վեր, քյուրոչ կասի.

- Տու պատրաստվի, ես էրթամ քիչմ ֆոալ, գյամ, որ վաղ էրթանքյ:

Տղեն որ կէրթա, աղչիյն կէլնի կէրթա մո դև, դևուն կասի. - Վալլա. իմ ախպեր նշանվե, զիկ էլ վաղ պիտի տանի, տղեյներն էլ ճմենս ճանեց, իթալ տյուս: Ես քեզնից ի՞նչխ ծեռ պիտի քյաշեմ:

Կասի. - Որ տյու զիզնից ծեռ չես քյաշե, ես քյե տեղ կուտամ, առ կնա ի:ետ, որ էն կիշեր կտանեն մեյտեղ, ախպեր յաթաղ տյու իսկե, էսա տեղ ցանի մեչ տեղաց, ախպերդ պառկելուն պես կմեռնի: Էն գյախ նոր արե, զի խասի:

Իրիկուն տղեն կուգյա տուն, կասի. - Քյեոր, պատրա՞ստ ես:

Կասի. - Պատրաստ եմ, առատուն էրթանքյ:

Առատուն կէլնեն կէրթան: Ծատ կէրթան. քիչ կէրթան, կխասնեն էդա քյաղաքյ:

Էնտեղ ուրենց խարսնիսն կանեն. էն կիշեր որ մեյտեղ կտանեն, աղչիյն կասի. - Ես պիտի կսեմ իմ ախպոր տեղ:

Աղչիկ որ տեղ կիսկի, տեղ կցանի մեչ տեղաց. ախպեր որ տանեն կպառկցուցեն. կէրթան խարսն էլ պիրելու. կտիսնան, որ տղեն սիվցեր ի մեչ յաթղին:

Կուլան, կմոմոան, էն մեկէլ օր պիտի տանեն խորեն: Կտանեն կխորեն, աղչիյ կթոնի կէրթնն:

Աղչիյ կէրթա. էն շներաց կադր վո՛վ ի կիտցող. կինեն փողիյիդանքյ. անոթի ծարավ կֆոան:

Օրմ շներ կէրթան կտիսնան կասաբ միս ի կախե. կզանեն. մեյ յան միս կառնեն. կտանեն:

Կասաբ կբոոսա. - Օ՛շտ, օ՛շտ:

Էն մեկ մարթ կասի. - Ջա՛նմ. մենքյ խետկներ. ինոնք թակավրու փեսի շներն են. ինոնց տերն մեռեր ի. մնացեր են անտեր. որ իմանանն. կուգյան քյե կճղեն:

Ծներաց մեյն՝ Ջանջիլ-կոան. որ կլսի էդա խաբրներ. կ...սի. - Տարե՛ք միս կախեք ուր տեղ:

Ալ-կդրմ կպերի միս կկախի էնտեղ:

Կխարցուցին կասաբին. - Ի՞նչ էր ասիր: Մենքյ աղեկ չխասկցանքյ:

Կասի. - Վալլա՛. ծեր տեր մեռեր ի, սյուք մնացեր եքյ անտեր:

- Ի՞նչ կասես. մեր տեր մեռե՞:

- Խա՛. ծեր տեր մեռե:

- Դե, որ ըսկուն ի, էլի էրթանքյ ինոր տեղ մի շանց տու:

Կասաբ կառնի շներ, կէրթա ինոնց տիրոջ գյերեզման շանց կուտա ինոնց:

Ծներ կփորեն. կխանեն տյուս:

Ջանջիլ-կոան կասի. - Ալ-կդրմ. կնա Նինեմից էն տեղից պե. լցենքյ վերեն:

Տեղն էլ լաճու պերած անմախական ճյուրն ի:

Պառավ ճյուր կուտա. կառնեն կուգյան. կլցեն վերեն, լաճ կժրի:

Խաբար կէրթա թակավրուն. թե փեսեդ յարավ, խալավ պերեքյ:

Խալավ կպիրեն. կխագյուցեն, կառնեն կտանեն տուն:

Տղեն կասի շներաց. - Կէրթաքյ իմ քյուրոջ, ինոր դևին կսպանեքյ, իմ քյուրոջ ծամեր քիչմ պերեք զի նշանապան:

Ծներ կէրթան դևին էլ, քյուրոջն էլ կսպանեն. նշանապան կպիրեն:

Տղեն կփսայվի, սորա կէլնի Արևելյան և Արևմտյան թակավորներաց, որ ինոր խողեր տիրեր են. մարթ կէօրեոխկի. թե ես կոիվ կուզեմ:

Կասեն. - Պատրաստ ենքյ:

Կէրթան կոիվ. կտիսնան՝ մեյ մարթ ի. իրեքյ շուն ի պիրե խետ:

Կուգյան կխարցուցեն. - Ու՞ր է քյո զորքյեր:

Կասի. - Գյեռ կա իմ զորքեր:

Կասեն. - Մենքյ շու՞ն ենք, որ շուն կպիրես մեր վերեն:

Կասի. - Ես ծեր ոյուշման եմ, խերիքյ ի:

Կոիվ կբանշլային:

Տղեն կասի. - Ալ-կդրմ, Դանվդան-զարան, Ջանջիլ-կոան ծե տիսնամ:

Իսոնք կինեն մեչ անքյրին, կպրտեն:

Ուր խոր քյաղքյներ կառնի, կնստի թակավոր: